# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Թ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ/*

***N 34 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Աշտարակ համայնքի ավագանու 22.08.2019թ. արտահերթ նիստի օրակարգը /կցվում է/:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ

ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 22-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ*

# <u>Օ Ր Ա Կ Ա Ր Գ</u>

1. Աշտարակ համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Թ. Շահվերդյան/*

2. Աշտարակ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարողականի մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

3. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Շ. Վահանյան/*

4. Անշարժ գույքի նվիրաբերության 21.08.2013թ. ՍՄ 2709 պայմանագիրը լուծելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

5. 02-001-0410-0110 ծածկագրով հողամասը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

6. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

7. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

8. Համայնքային սեփականություն հանդիսացող, որպես քաղաքացու սեփականություն փոխանցված և որպես պետական սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր համայնքային սեփականություն ճանաչելու և աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

9. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Ա. Մնացականյան/*

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***Ն 35 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 38 հոդվածի առաջին մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35/1 հոդվածի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Ի գիտություն ընդունել 2019 թվականի բյուջեի երկրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականը.

| | ***Վարչական բյուջե*** | ***Ֆոնդային բյուջե*** | ***Ընդամենը*** |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 270863.3 | 26544.8 | 297408.1 |
| Ծախսային մաս | 254448.9 | 16078.8 | 270527.7 |

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԵՎ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Շ. ՎԱՀԱՆՅԱՆ/*

***N 36 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով որոշ հարկապուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի և <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի և հողի հարկի արտոնություն /հավելված 1/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ
ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ
ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ 21.08.2013Թ. ՍՄ 2709 ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

***Արձ.- 29***

***/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/***

***N 37 – Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով անշարժ գույքի նվիրաբերության 21.08.2013թ. ՍՄ 2709 պայմանագրի 4.3 կետը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածի 6-րդ կետի դրույթներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բարեգործություն ստացողը անշարժ գույքը չի օգտագործել ըստ նպատակային նշանակության և չի կատարել պայմանագրի 1.3 կետով սահմանված պայմանը՝ <<Նոր Հալեպ>> բնակելի թաղամաս հիմնելու և այն կառուցապատելու նպատակով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Լուծել Աշտարակ քաղաքի Էջմիածնի խճուղի N 6 հասցեում գտնվող /ծածկագիր՝ 02-001-0410-0110/ 4,8հա բնակավայրերի նշանակության հողամասի նկատմամբ Աշտարակի քաղաքապետի և <<Սիրիահայերի Հիմնախնդիրները Համակարգող Կենտրոն>> հասարակական կազմակերպության միջև 21.08.2013թ. կնքված անշարժ գույքի նվիրաբերության /ՍՄ 2709/ պայմանագիրը:

2. Սույն որոշման 1-ին կետից բխող իրավական ակտերի ընդունումը վերապահել համայնքի ղեկավարին:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

***ԿՈՂՄ - 9*** ***ԴԵՄ- 0*** ***ՁԵՌՆՊԱՀ - 0***

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

**02-001-0410-0110 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***Ն 38– Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0410-0110 ծածկագրով 4,8հա մակերեսով բնակավայրերի նշանակության այլ հողամասը ճանաչել համայնքային սեփականություն:

2. Հավանություն տալ առաջին կետում նշված բնակավայրերի նշանակության այլ հողամասը գործառնական նշանակությունը փոփոխելուց հետո աճուրդ-վաճառքով /անհրաժեշտության դեպքում մաս-մաս/ օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 70%-ը:

**<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 39– Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Տիգրան Բարսամյանի 26.07.2019թ. N 1007՝ գյուղ. նշանակության հողամասում ինքնակամ կառուցած բնակելի տան օրինականացման մասին դիմումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N912-Ն և 29.12.2011թ. N1920-Ն որոշումների պահանջներով, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Հավանություն տալ Աշտարակ տեղամասի 02-001-0598-0011 ծածկագրում գտնվող, Տիգրան Բարսամյանին սեփականության իրավունքով պատկանող 0,298հա գյուղատնտեսական նշանակության պտղատու այգում ինքնակամ բնակելի տան պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 137,9քմ հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման փոխելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 40– Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Հիմք ընդունելով Վիգեն Եսայանի 20.08.2019թ. N 1168 և Արմեն Գյուլզադյանի 21.08.2019թ. N 1173 դիմումները, համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48[1],76-80 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N286 որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1 կետի 21-րդ ենթակետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1.Թույլատրել Աշտարակ քաղաքի Արցախի փողոց, N 8 բնակելի շենքի հարևանությամբ գտնվող, 139-001 ծածկագրից 20քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ավտոտնակ կառուցելու համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Արմեն Գյուլզադյանին տրամադրելու 20 տարի ժամկետով՝ տարեկան 15 000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ վճարով:

2. Թույլատրել Աշտարակ քաղաքի Գեղազնիկի փողոց, N 6 հասցեին կից, 106-001 ծածկագրից 11 քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահի ընդլայնման համար կառուցապատման իրավունքով /առանց մրցույթի/ Վիգեն Եսայանին տրամադրելու 10 տարի ժամկետով՝ տարեկան 10 000 /տաս հազար/ ՀՀ դրամ վճարով:

3. Համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր կառուցապատման իրավունքով /մրցույթ/ տրամադրել և հաստատել տարեկան վճարի մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*22.08.2019թ. N 40-Ա որոշմամբ*

Հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթ

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | 1քմ-ի տարեկան վճարի մեկնարկային գինը դրամ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողամաս | ՌՖԷԻ Գիտավան | 778-001-01-հց | 24 | բնակավայրերի | | ընդհանուր օգտագործման | 50 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԵՎ ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴ- ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 41– Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 07.09.2006թ. N1398-Ն որոշմամբ համայնքին հանձնված 437-057 ծածկագրով 0,0702հա հողամասը փոխանցվել են որպես ֆիզիկական անձի սեփականություն, իսկ 221-101 ծածկագրով 210քմ հողամասը գրանցվել է որպես պետական սեփականություն, սակայն իրականում վերը նշված հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 21 կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀԿԱԱԳԿՊԿ-ի նախագահի 01.06.2010թ. N 186-Ն հրամանով հաստատված կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը, համայնքի ավագանին '*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 221-101 ծածկագրով 210քմ մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 70%-ը:
2. Համայնքի վարչական տարածքում գտնվող, 437-057 ծածկագրից 0,0702հա, գյուղատնտեսական նշանակության վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն և հավանություն տալ աճուրդ- վաճառքով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը, մեկնարկային գինը՝ կադաստրային արժեքի 100%-ը:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*22-ը օգոստոսի 2019թ.*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Արձ.- 29*

*/Զեկուցող՝ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ/*

***N 42– Ա ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի դրույթներով, Աշտարակ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին՝*

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքի միջոցով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝**

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ- 0 ՁԵՌՆՊԱՀ - 0*

| | |
|---|---|
| ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ | ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ |
| ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ | ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ |
| ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ | ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ |
| ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ | ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*
*22.08.2019թ. N 42-Ա որոշմամբ*

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումները |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողամաս | Երևան-Գյումրի մայրուղի N 13 | 191-023-hg | 196 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատ. | 50 | |
| 2 | հողամաս | Մուղնի թաղամաս | 361-005-hg և 006-hg | 220 | բնակավայրերի | | բնակելի կառուցապատ. | 50 | |
| 3 | հողամաս | Ս. Սարգսի փողոց | 192-032-hg | 4000 | բնակավայրերի | | Հասարակական կառուցապատ. | 50 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**

***Հավելված 2***

*Հաստատված է համայնքի ավագանու*
*22.08.2019թ. N 42-Ա որոշմամբ*

| Լոտ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը /կադաստրային արժեքի %/ | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 501-005 | 1,0512հա | գյուղ. | արոտավայր | --- | 100 | |
| 2 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 526-032 | 0,6706հա | գյուղ. | արոտավայր | --- | 100 | |
| 3 | հողատարածք | Աշտարակ տեղամաս | 561-008 | 0,4152հա | գյուղ. | այլ | --- | 100 | |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն**